ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЗДРАВОХРАНЕНИЯ РА
MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA

Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ անվան
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
АОЗТ НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР ОНКОЛОГИИ им. В. А. ФАНАРДЖЯНА
CJSC NATIONAL CENTER OF ONCOLOGY named after V. A. FANARJIAN

ՈՒԱԿ NCO

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ, ՖԱՆԱՐՋՅԱՆ Փ.76
ЕРЕВАН, КАНАКЕР, ул. ФАНАРДЖЯНА, 76
76 FANARJIAN str., YEREVAN, KANAKER, ARMENIA

№ 682
«02» 07 2024

Հեռ. (+374 10) 20-94-02

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
Նարեկ Մանուկյանի

«ՆԵՊԱ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Նեպա» ՍՊԸ-ի միջև 2024թ մայիսի 06-ին կնքվել է N ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/53-9 ծածկագրով շինանյութի մատակարարման պայմանագիր:

Հիմք ընդունելով ՀՀ պետական վերահսկողական ծառայության 10.06.2024թ N Ե/1388-24 գրությունը, ինչպես նաև առաջնորդվելով կնքված պայմանագրի 8.3 կետով, այն է. «Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում

է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար»: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն առաջարկել է լուծել N ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/53-9 ծածկագրով բժշկական նշանակության ապրանքների մատակարարման պայմանագիրը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով 2024 թվականի հունիսի 18-ի N 597 գրությամբ «Նեպա» ՍՊԸ-ն հայտով նշված nepa.llc@list.ru էլեկտրոնային հասցեին ծանուցվել է N ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/53-9 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման մասին և վերջինիս մասին հայտարարությունը 2024 թվականի հունիսի 18-ին հրապարակվել է https://gnumner.minfin.am/ կայքում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Ուսումնասիրելով ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից ներկայացված գրությունը և հաշվի առնելով այն փաստը, որ «Նեպա» ՍՊԸ -ի կողմից գրությամբ սահմանված ժամկետներում չի իրականացվել պայմանագրի կատարման և

որակավորման ապահովումների վճարումը, «Նեպա» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. «Նեպա» ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը, «Նեպա» ՍՊԸ-ին՝ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը պայմանագիրը միակողմանի լուծելու եղանակով	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Նեպա» ՍՊԸ	02268014	Ք. Երևան, Շահումյան 5փ., 19 տուն	ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4 N526-ն որոշման 119-րդ կետի 2-րդ ենթակետ			02.07.204թ. ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/53-9

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՏՆՕՐԵՆ ՍԱՐԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների բաժնի ղեկավար
Հեռ. /010/ 20 50 50 /102